



**EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE**

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպմամբ 2013թ. հունիսի 16-ից օգոստոսի 31-ը կիրազործվի «Արի Տուն» ծրագիրը:

Մրցույթին կարող են մասնակցել 13-20 տարեկան երիտասարդները:

Հայտերի ներկայացման ժամկետների և ծրագրի մանրամասնությունների մասին կարող եք ծանոթանալ կից ներկայացվող հայտարարությունում:

ՀԱՐԳԵԼԻ՝ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ՀՀ սփյուռքի նախարարությունը վերսկսում է Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության 2013 թվականի «Արի տուն» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է՝ աշխարհասփյուռ հայ երիտասարդներին ճանաչելի դարձնել Հայաստան-հայրենիքը, նրանց մեջ սերմանել ազգային ինքնության գիտակցություն, ծանոթացնել իր ժողովրդի ավանդույթներին ու սովորույթներին, հայ ընտանիքին, հայ մարդու հոգեկերտվածքին, աջակցել Հայաստան-Սփյուռք բարոյահոգեբանական, կրթամշակութային մերձեցմանը:

Ծրագիրը մեկնարկում է 2013թ. հունիսի 16-ին և շարունակվելու է մինչև օգոստոսի 31-ը, որի ընթացքում սփյուռքահայ 13-20 տարեկան երիտասարդները երկշաբաթյա փուլերով կհյուրընկալվեն հայաստանաբնակ ընտանիքներում, կմասնակցեն ծրագրի ճամբարային փուլին:

Հյուրընկալող ընտանիքների ընտրությունը կատարվում է Երևան քաղաքի վարչական շրջանների, ՀՀ մարզպետարանների և ՀՀ սփյուռքի նախարարության միջոցով. երիտասարդներն ընտանիքներում հյուրընկալվում են անհատույց: Սփյուռքահայ երիտասարդների՝ Հայաստան այցելությունները կազմակերպվում են Սփյուռքի համայնքային կառույցների, կրթօջախների, հայկական կազմակերպությունների կողմից՝ տվյալ երկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների աջակցությամբ: Հայաստան այցելող երիտասարդներն իրենց ճանապարհաձախսը հոգում են սեփական կամ հովանավորների միջոցներով:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում ՀՀ սփյուռքի նախարարությունն ապահովում է երիտասարդների դիմավորումը և ճանապարհումը, կազմակերպում է այցելություններ թանգարաններ, շրջայցեր Հայաստանի տեսարժան վայրերով: Ծրագրի ճամբարային փուլում կկազմակերպվեն նաև ուսուցողական ծրագրեր՝ հայրենագիտություն, հայոց լեզու, երգ, պար և այլն: Կկազմակերպվեն հանդիպումներ Հայաստանի պետական, հասարակական, մշակութային գործիչների հետ:

Համոզված ենք, որ «Արի տուն» ծրագիրը մեծապես կնպաստի հայապահպանությանը և հայադարձությանը, երիտասարդների միջև հաղորդակցության միասնական ցանցի ստեղծմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել

ՀՀ սփյուռքի նախարարություն

Հասցե՝ ՀՀ ք.Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1,

Հեռ.՝ (+37410) 58-56-01/117/

52-02-46, 52-14-10

Հեռապատճեն՝ (+37410) 58-91-57

Էլ.փոստ՝ aritun.mindiaspora@gmail.com կամ aritun_diaspora@yahoo.com

www.aritun.am

Ողջուն, թանկագին բարեկամ,

Շնորհակալություն ենք հայտնում «ԱՐԻ ՏՈՒՆ» ծրագրին մասնակցելու քո ցանկության համար: Այցելելով Հայաստան և մասնակցելով «ԱՐԻ ՏՈՒՆ» ծրագրին՝ դու հնարավորություն կունենաս ներթափանցել հայկական աշխարհի պատմության ու մշակույթի մեջ, ճանաչել Հայաստան-հայրենիքը, սպրել հայաստանյան ընտանիքի սովորույթներով ու ավանդույթներով, ինչպես նաև ակտիվ հանգստ անցկացնել ամառային ճամբարում, մասնակցել հայրենագիտության, ազգային երգ ու պարի դասընթացների:

Հայկական օջախի դռները միշտ բաց են մեր սփյուռքահայ բարեկամների առջև:

Մենք մշակել ենք այս ծրագիրը՝ օգնելու քեզ նորովի գնահատել հայրենիքի հոգևոր-մշակութային արժեքները և գիտակցել քո ազգային ինքնությունը:

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴ

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

«ԱՐԻ ՏՈՒՆ» ծրագրին սփյուռքահայ երիտասարդների մասնակցության

1. Հյուրընկալվող երիտասարդը պետք է՝

- լինի 13-20 տարեկան,
- նախկինում մասնակցած չլինի «Արի տուն» ծրագրին,
- հոգա Հայաստան (և հետադարձ) այցելության ճանապարհաձախարհ,
- ներկայացնի մեկ լրացված հայտադիմում, մեկ լուսանկար՝ փակցված էջի վերին աջ անկյունում, ինչպես նաև անձնագրի պատճենը,
- ժամանելուց ներկայացնի առողջության մասին բժշկի կողմից տրված տեղեկանք (ստորագրված, կնքված):

2. Հայտադիմումի և կից փաստաթղթերի ներկայացման կարգը

Հայտադիմումը ներբեռնել www.aritun.am կայքից, փակցնել նկարը, լրացնել և ստորագրել:

Պահանջվող փաստաթղթերի փաթեթն ուղարկել տվյալ տարածքում համայնքային կառույց (կրթական, մշակութային, եկեղեցական, մարզական, լրատվական, հասարակական, այլ) կամ ՀՀ սփյուռքի նախարարություն՝ փոստով, հեռապատճենով կամ էլ. փոստով (aritun.mindiaspora@gmail.com)՝ լուսապատճենված (scan):

Ամբողջական փաթեթը ներկայացնելու վերջնաժամկետը յուրաքանչյուր փուլի սկսվելուց առնվազն **մեկ ամիս** առաջ է:

ՀԱՅՏԱՂԻՄՈՒՄ



Անուն

Ազգանուն

Ծննդյան տարեթիվ
Օր Ամիս Տարի

Սեռ՝ իգական արական

Ծննդավայր
Երկիր Քաղաք

Բնակության երկիր Քաղաքացիություն

Բնակության հասցե
բնակավայր փողոց տուն

Տան կամ ծնողի հեռախոսահամար
Երկրի կոդ բնակավայրի կոդ համար

Բջջային հեռախոսահամար
Երկրի կոդ օպերատորի կոդ համար

Էլ. փոստ

Հայրը՝
Անուն, ազգանուն
զբաղմունք

Մայրը՝
Անուն, ազգանուն
զբաղմունք

Ուսումնական հաստատություն կամ աշխատավայր, կարգավիճակ

Տիրապետում եք,արդյո՞ք հայերենին:

Այո Ոչ

Երբևէ եղե՞լ եք Հայաստանում:

Այո Ոչ

Եթե այո, ապա երբ և ինչ նպատակով

Ունեք արդյո՞ք ազգականներ Հայաստանում:

Այո Ոչ

Եթե այո, խնդրում ենք աղյուսակում պարտադիր լրացնել նրանց բոլոր

N	Անուն, ազգանուն	Հասցե (փողոց, շենք, բնակարան)	Հեռախոս	Բջջային
1				
2				
3				

Խնդրում ենք նշել ծրագրին մասնակցության Ձեր նախընտրելի ժամանակահատվածը (կարող եք նշել մի քանիսը):

1	Հունիսի 16 – հունիսի 29	
2	Հունիսի 23 – հուլիսի 6	
3	Հուլիսի 7 – հուլիսի 20	
4	Հուլիսի 14 – հուլիսի 27	
5	Հուլիսի 28 – օգոստոսի 10	
6	Օգոստոսի 4 – օգոստոսի 17	
7	Օգոստոսի 11 – օգոստոսի 24	
8	Օգոստոսի 18 – օգոստոսի 31	

Ունեք արդյո՞ք հյուրընկալ ընտանիքի կարիք ծրագրի առաջին 9 օրերի ընթացքում

Այո Ոչ

Մասնակցելու եք արդյո՞ք ճամբարային փուլին ծրագրի վերջին 4 օրերի ընթացքում

Այո Ոչ

Լրացուցիչ տեղեկատվություն (նշեք, եթե ունեք հատուկ բժշկական պայմանների, սննդակարգի կարիք կամ որևէ հակացուցում (ալերգիա) կամ այնպիսի տեղեկատվություն, որը Ձեր կարծիքով անհրաժեշտ է ծրագրի կազմակերպիչների և հյուրընկալ ընտանիքների համար):

Ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Dear friend,

We would like to thank you in advance for your wish to participate in “Ari Tun” program. If you visit Armenia and participate in “Ari Tun” program, you will have an opportunity to get acquainted with the Armenian world history and culture, recognize your homeland, experience local customs and traditions by living with a host family, spend your leisure activities in summer camp, as well as to attend lessons of Armenology, national music and dance classes.

Armenia’s doors are always open for all our Armenians from Diaspora.

We have done this project in order to help you newly appreciate the spiritual and cultural values of the Homeland and realize your national identity.

**THE MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA
“ARI TUN” PROGRAM COORDINATING COUNCIL**

**Conditions
for participation in “Ari Tun” program**

1. The applicant must:

- be 13-20 years old,
- not be participated in «Ari tun» program earlier,
- pay two-way airfare (to and from Armenia),
- submit the original completed application form, one photo (posted on the upper-right corner of the page), as well as the photocopy of passport.
- submit medical record by his/her physician (signed and stamped).

2. Procedure for submitting application form and attached documents

Applicants have to download, complete and sign the application form from www.aritun.am website and to attach the photo.

Applicants must send the required package of documents to a community organization such as religious, cultural, sport, public, informational and educational of the given community, or send to the Ministry of Diaspora of the Republic of Armenia by mail, fax or scanned version by email (aritun.mindiaspora@gmail.com).

The deadline for submitting the all package of documents is at least a month prior to your first preferred period.

APPLICATION FORM

PERSONAL INFORMATION

First Name

Last Name

Date of Birth
Day Month Year

Gender Female Male

Place of Birth
Country City

Country of Residence Citizenship

Permanent Address
Building Apartment House

Home/Parent's phone number
country code / city code / number

Mobile
country code / operator code / number

E-mail


Father
First Name Last Name
Occupation

Mather
First Name Last Name
Occupation

Name of Educational institution or workplace/ status

Proficiency in Armenian language

Yes NO



Have you ever been in Armenia?

Yes NO

<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
--------------------------	--------------------------

If yes, when and the purpose of visit

<input type="text"/>

Do you have relatives in Armenia?

Yes NO

<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
--------------------------	--------------------------

If yes, please submit the details about them (it is necessary to fill fields)

N	First and last name	Address (street,building, apartment)	Phone	Cell phone
1.				
2.				

Please indicate the date which you prefer to visit Armenia (you can indicate more than one).

1	June 16 - June 29	
2	June 23 - July 6	
3	July 7 - July 20	
4	July 14 - July 27	
5	July 28 - August 10	
6	August 4 - August 17	
7	August 11 - August 24	
8	August 18 - August 31	

Do you need the host family during your first 9 days?

Yes NO

<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
--------------------------	--------------------------

Do you want to participate in camp projects in last 4 days of the program?

Yes NO

<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
--------------------------	--------------------------

Additional information (indicate if you have special medical condition, diet or any contraindications (allergy) or any information that you think the program organizers and the host family must know).

<input type="text"/>

Signature: _____

Date: _____